ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր 20/03/2020

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայյանը

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 20-ի թիվ 04 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2. Հաշվետու տարում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:

3. Ռուզաննա Հակոբյանին գումար վերադարձնելու մասին:

4.Համայնքային սեփականություն համարվող գույքը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

5.Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկ ային գին սահմանելու մասին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16/

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով՝

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17/

Լսեցին
ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝

1. Հաստատել հաշվետու տարում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն 1,2,3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18/

Լսեցին
ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Ռուզաննա Հակոբյանի դիմումը՝

Ռուզաննա Հակոբյանին վերադարձնել 900125002213 հաշվեհամարին փոխանցված և իր անվամբ գերավճար կազմող 9917/ինը հազար ինը հարյուր տասնյոթ/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով՝

1. Եղիշե Ռոմանի Սիմոնյանին ողղակի վաճառքով օտարել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց թիվ 8/9 հասցեում գտնվող,(վկայական համար 12032020-07-0085, կադաստրային ծածկագիր 07-005-0026-0808) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված 0,008712 հա մակերեսով հողամասը՝ 394 131 (երեք հարյուր իննսունչորս հազար հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամով և իր կողմից կառուցված 69,06 քմ արտաքին մակերեսով շինությունը՝ 538 668(հինգ հարյուր երեսունութ հազար վեց հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

Հողամասի հասցեն	Չափը	Նպատակային և գործառնական նշանակությունը	Կադաստրային ծածկագիրը	Մեկնարկային գինը
Քաղաք Ծաղկաձոր, Միեր Մկրչյան փողոց, թիվ 37	0,254հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0020-0007	11 490 960 ՀՀ դրամ
Քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց,թիվ 40/11	0,2623հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0030-0084	11 866 452 ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը